

տուն պատերազմի: 5 Եւ զաւրավարն Վասակ ելաներ ընդ առաջ խոցա եւ-թանասուն հազարաւ. հարկաներ սատակեր զգաւրսն ամենայն Պարսից, սպանաներ զիր զազգային զԴեհկան Նահապետն, եւ զմնացեալսն առաջի իւր տաներ փախստական ծիսհալածք արարեալք: 6 Բայց Մերուժանն Արծրունի փախուցեալ ապրեր, որ առաջնորդեր խոցա:

**ԳԼՈՒԽ ԼԳ.**

1 Յաղագս Սուրենայ Պահլաւի, որ եկն եւ նա զաւրաւք բազմաւք. եւ սա եւս նկուն լիներ իբրեւ զառաջինսն:

2 Ապա կրկներ լիներ<sup>1</sup> զաւրաժողով Շապուհ արքայ Պարսից, կազմեր պատրաստեր զունդս բազումս զաւրացն եւ փիղս անթիւս, զաւրս ընդիրս եւ պատերազմողս. եւ Սուրեն Պահլաւ, որ ազգակից իսկ էր Արշակայ թագաւորին Յայոց, եւ Մերուժանն առաջնորդ խոցա. եւ արծակեաց ի վերայ խոցա: 3 Ապա քանզի եւ Վասակ զաւրավարն Յայոց խաղաց գնաց ընդ առաջ խոցա երեսուն հազարաւ, հարկաներ ի դիմի զՍուրեն եւ սպանաներ, եւ զգաւրսն կոտորեաց. բայց<sup>2</sup> Մերուժան փախչեր:

**ԳԼՈՒԽ ԼԴ.**

1 Յաղագս Ապական Վսեմականի, զի եկն եւ նա յայս պատերազմս, եւ նմա ծախողեցաւ որպէս առաջնոցն:

2 Իսկ յետ Սուրենայ եկն Վսեմական. գայր հասաներ անչափ բազմութեամբ եւ անթիւ զաւրաւք, եւ Մերուժան առաջնորդ առաքեալ ի Շապիոյ արքայէն Պարսից ի գործ պատերազմի ի վերայ երկրին Յայոց: 3 Ապա առաքեցաւ ընդ առաջ խորա Վասակ սպարապետ զաւրավարն Յայոց. հարկաներ սատակեր զԱպականն Վսեմական հանդերձ զաւրաւքն, եւ զմին ի խոցանէն ոչ ապրեցուցաներ: 4 Բայց միայն փախչեր չարագործն Մերուժան:

**ԳԼՈՒԽ ԼԵ.**

1 Յաղագս Չըկայ Նուիրակապետի, որ առաքեցաւ ի Շապիոյ արքայէն ի վերայ Յայոց բազում զաւրաւք ի պատերազմ, եւ սատակեցաւ իբրեւ զառաջինսն:

2 Յետ այսորիկ Չիկ Նուիրակապետն զիր արծակեաց Շապուհ արքայ Պարսից, մղել զպատերազմ Յայոց. եւ զՄերուժանն առաջնորդ ընդ խոցա առներ: 3 Եւ զումարէր զումարտակ բազում իբրեւ զաւազ ծովու բազմութեամբ, եւ գային հասանէին յերկիրն Յայոց: 4 Ապա ելաներ ի դիմի հարկա-

1 Ի տպ. Պատկանեան՝ կրկին լիներ  
2 Օրինակ մի յաւելու՝ պիղծն